ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

Հակոբ Հակոբյան ԱՁ-ն ՉՀ-ԷԱՃԱՊՁԲ-2026/14 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը
5	Կաղամբ, մաքրած, վաղահաս: Արտաքին տեսքը՝ գլուխները թարմ, ամբողջական, մաքուր, առանց հիվանդությունների, լիովին ձևավորված, չծլած, տվյալ բուսաբանական տեսակին բնորոշ գույնով, ձևով, համ ու հոտով, առանց կողմնակի հոտի և համի: Գլուխները չպետք է լինեն գյուղատնտեսական վնասատուներով վնասված, չպետք է ունենան ավելորդ արտաքին խոնավություն, պետք է լինեն խիտ կամ քիչ խիտ, բայց ոչ փխրուն, տարբեր աստիճանի փխրունությամբ: Գլուխների մաքրման աստիճանը՝ կաղամբի գլուխները պետք է մաքրված լինեն մինչև մակրեևույթը, ամուր գրկող կանաչ և սպիտակ տերևներով: Վաղահաս կաղամբի գլուխները պետք է մաքրված լինեն վարդաձև տերևաբույլերից և օգտագործման համար ոչ պիտանի տերևներից: Կաղամբի մաքրված գլուխների քաշը՝ 0.8-1.8 կգ: ԳՕՍՏ 28373-94 կամ համարժեք: Մատակարարումն իրականացվում է առնվազն շաբաթական մեկ անգամ: Պահանջագիրը Վաճառողին տրամադրվում է յուրաքանչյուր մատակարարումից առնվազն 2 (երկու) աշխատանքային օր առաջ: Պահանջագիրը Վաճառողին տրամադրվում է էլեկտրոնային փոստի կամ կապի այլ միջոցներով: Մատակարարումն իրականացվում է աշխատանքային օրվա ժամը 08:30-09:00 ընկած ժամանակահատվածում՝ համապատասխան մանկապարտեզներ նշված հասցեներով: Սննդամթերքի փոխադրումը տրանսպորտային միջոցներով իրականացնելիս պետք է ապահովել հետևյալ պայմանները՝ տրանսպորտային միջոցների բեռնային բաժանմունքների և բեռնարկղերի կառուցվածքը պետք է ապահովված լինի աղտոտումից, կենդանիների, այդ թվում՝ կրծողների և միջատների ներթափանցումից, տրանսպորտային միջոցների բեռնային բաժանմունքների և բեռնարկղերի ներքին մակերևույթը պետք է պատրաստված լինի լվացվող և ոչ թունավոր

	նյութերից և պետք է պարբերաբար ենթարկվի անհրաժեշտ մաքրման, լվացման և ախտահանման: Առաքողները պետք է ապահովված լինեն սանիտարական արտահագուստով (խալաթ և ձեռնոցներ): Տեխնիկական բնութագրին կամ մատակարարման պայմաններին անհամապատասխանություն ի հայտ գալու դեպքում անհամապատասխանության շտկման ժամկետ է սահմանվում 60 րոպե: Մատակարարումը կատարվում է Վաճառողի միջոցների հաշվին՝ համապատասխան մանկապարտեզներ նշված հասցեներով՝ ՀՀ ԳՆ սննդամթերքի անվտանգության պետական ծառայության պետի 2017 թվականի «Սննդամթերք տեղափոխող փոխադրամիջոցների համար սանիտարական անձնագրի տրամադրման կարգը և սանիտարական անձնագրի օրինակելի ձևը հաստատելու մասին» թիվ 85-Ն հրամանով հաստատված սննդամթերքի տեղափոխման համար նախատեսված տրանսպորտային միջոցներով: Ապրանքատեսակի նշված ծավալը առավելագույնն է, այն կարող է նվազեցվել Գնորդի կողմից, հաշվի առնելով տարվա ընթացքում մանկապարտեզ հաճախող երեխաների փաստացի թվաքանակը և ֆինանսավորումը կիրականացվի փաստացի մատակարարված ապրանքի մասով: Գնորդն իրավունք ունի յուրաքանչյուր մատակարարված ապրանքի(ների) փորձանմուշը ուղարկել լաբորատոր փորձաքննության: Լաբորատոր հետազոտությունների արդյունքում բացասական եզրակացության ստացման դեպքում՝ ղեկավարվել Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին համապատասխան:

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

Акоб Акобян ИП в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՉՀ-ԷԱՃԱՊՁԲ-2026/14 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар
	технические характеристики
5	